

ՄԻ ԿՈՉՈՒԻՐ ԴՈՒՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ

Ինձ գինձդ երբեք համգստեան՝ երբեք իցե մի՛ կոչեր
 Որքա՛ն ալ որ տարիներն բռնանալով ըստիպեն.
 Մի՛ մըտածեր դուն մտնել ամբողջական հանգիստի,
 Որ ո՛չ միայն թոյն մարմնոյն՝ այլ է՛ նաեւ հոգիի

Ամենամեծ թշնամին: Նոր աշխատանք ըստեղծէ՛
 Բայց մի՛ մընար դուն անգործ: Անգործութեան մէջ ի՛սկոյն
 Կը սպըրդիս անկասկած դաւադրական վա՛տ ոյժեր,
 Կը կործանի հոգիիդ հէնձին հետ դէմքը պայծառ.

Եւ քեզմէ ներս կը մտնէ ձանձրոյթը նոր գոյներով.
 Կը մըթագնի սիրտըդ ծեր որ տակաւին երգ ունէր.
 Խոհերդ կ'ըլլան առաւել՝ ծա՛նք ու մըռա՛յլ, յոռետե՛ս.

Մարտահրաւէր չի՛ մընար շարունակել կեանքդ այս:
 Իսկ ամենէն աւելի սարսափելին այն է թէ՛
 Գերեզմանի մութ փոսին՝ այդ կեանքը քեզ կը բերէ:

ԱՆԵԼ